



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

15 ԱՊՐԻԼԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Մրազ Միրոյան, Նաիրա Գեվորգյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Միրոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նաիրա Գեվորգյանը

Լսեցին

ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ
ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Մեծաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել Մեծաձոր համայնքի ավագանու 15.04.2024թ. նիստի օրակարգը.

- Մեծաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին.
- «Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:
- «Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

4. Մեծածոր համայնքի 2024թվականի սեփականության գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի 1-ին կետի, <<Բյուջեարային համակարգի մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի պահանջներով, Մեծածոր համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ի գիտություն ընդունել Մեծածոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 2010թ.-ի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով և համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ Մեծածոր համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Վարձավճար սահմանել՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2016թ. սեպտեմբերի 22-ի N 898-Ն որոշմամբ հաստատված կադաստրային գները՝ համաձայն հավելվածի:

3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետին՝ համաձայնեցման:

4. ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ վարձակալության տրամադրելիս պայմանագրերը կնքել ՀՀ Կառավարության 2010 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմանը համապատասխան՝ մարզպետի դրական եզրակացության առկայության դեպքում:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.3 կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

Մեծաձոր համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին

Մեծաձոր ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեծաձոր համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Մեծաձոր համայնքի 2024 թվականի սեփականության գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/

Ավագանու անդամներ

ՍՈՒՏԱԼ ԱԲԱՍՅԱՆ *[Ստորագրություն]*

ԹՈՌՈՒՆ ՇԱՄՈՅԱՆ *[Ստորագրություն]*

ՎԵՐԻՔ ՇԱՄՈՅԱՆ *[Ստորագրություն]*

Համայնքի ղեկավար

ՄՐԱՋ ՄԻՐՈՅԱՆ *[Ստորագրություն]*



Նիստին արձանագրեց՝ Նաիրա Գեվորգյանը *[Ստորագրություն]*